

## Կայացավ քաղաքացիների ապրիլ ամսվա ընդունելությունը

14.04.2014

ՀՀ Վայոց ձորի մարզպետ Էդգար Ղազարյանի մոտ ա/թ ապրիլի 11-ին կայացավ քաղաքացիների հերթական ընդունելությունը:

Ընդունելության համար ցուցակագրվել էր 88 քաղաքացի, ընդունելության էին եկել բոլորը:

Ընդունելության եկած 82 քաղաքացիներ դիմել էին ֆինանսական օժանդակության խնդրանքով, որոնց խնդրանքը բավարարվեց: Իսկ 6-ը դիմել էին այլ հարցերով, որոնց վերաբերյալ մարզպետը հանձնարարություն տվեց մարզպետարանի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների ղեկավարներին՝ ուսումնասիրել բարձրացված հարցերը և օրենքով նախատեսված ժամկետներում պատասխանել: